ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

06.05.2016թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77[1]-77[6] հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի հունվարի 18-ի N 5-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Կուրթան համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, առողջապահության, քաղաքաշինության, առևտրի և ծառայությունների, պաշտպանության, կրթության, բնության և շրջակա միջավայրի պահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության մեկ նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Կուրթան համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Վարդան Հովհաննիսյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Նաիրա Համբարձումյան _____

Արման Մխիթարյան _____

Գագիկ Հախինյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Ժիրայր Բասմաջյան _____

Անահիտ Բարոյան _____

Արտակ Դեմիրչյան _____

Սամվել Խառատյան _____

/ Համայնքի ղեկավար՝
Միհեր Գևորգյան _____